

Հանե Օրստավիկ

ԻՆՁ ԸՆԴԱՌԱՋ ԱՐԻ

ՎԵՊ

Թարգմանիչ՝

Կարինե Աղաբեկյան



Գ Ի Տ Ա Ն Ք
Երևան 2018



This translation has been published with the financial support of

NORLA.

Hanne Orstavik, Det finnes en storåpen plass i Bordeaux (PLACE OUVERTE A BORDEAUX)

Օրստավիկ, Հանե

Ի Ն Ձ Ը Ն Դ Ա Ռ Ա Ջ Ա Ր Ի – Վեպ, Եր.: Գիտանք, 2018, 146 էջ.

Ժամանակակից ոճով ու լեզվով գրված այս հոգեբանական վեպը պատմություն է Եվրոպացի կնոջ և տղամարդու հարաբերությունների մասին՝ բոլոր բացահայտ մանրամասներով: Եռաշերտ վեպ է՝ արվեստին վերաբերող հեղինակի խոհերով, սեռազգայական տեսարաններով և ժամանակակից Եվրոպայի պատկերներով: Վեպի գործողությունն ընթանում է Նորվեգիայում և Ֆրանսիայում՝ Բորդոյի արվեստի թանգարանում ցուցադրությունից առաջ:

Հանե Օրստավիկը Նորվեգիայի ժամանակակից գրականության նշանավոր և սիրված գրողներից է: Բազմաթիվ գրական մրցանակների դափնեկիր է: Նրա գրքերը հրատարակվել են ավելի քան 15 լեզվով՝ ներառյալ անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն:

ISBN 978-9939-810-40-9

© Forlaget Oktober AS, 2013
Published in agreement with Oslo Literary Agency
With the permission of Notabilia

© «Գիտանք», թարգմանության և ձևավորման համար, 2018

Հանդիպե՞նք

Հենց այս կերպ սկսվեց մեր՝ Յոհաննեսի և իմ պատմությունը: Կամ ավելի ստույգ, սկսվեց, երբ մի ամսագրում կարդացի նրա հոդվածը. նա արվեստի պատմաբան էր, ուստի ճանաչում էի նրան. գրում էր ոչ թե գրախոսություններ, այլ ավելի տեսական բաներ արվեստի գեղագիտության ու հասարակագիտության մասին, որոնք, սակայն, երբեք չէի կարդացել. և ահա տեսա այդ հոդվածը, որը ինձ մեծ հաճույք պատճառեց. լավ մտածված հոդված էր, գաղափարները ներկայացված էին այնքան պարզ բառերով, ասես դրանք նրա բռուն էին կամ բառերը նրա ձեռքերն էին, ինչի շնորհիվ այն, ինչ գրել էր, ցայտուն արտացոլում էր նրա անհատականությունը: Ես նայեցի նրա անվան կողքի փոքր լուսանկարին. մուգ ցից-ցից խճճված մազերով երիզված դեմքը այնքան ջերմ էր, այնքան ուրախ, որ անմիջապես ցանկացա կապվել նրա հետ: Նախ վանեցի այդ միտքը, բայց երկու օր անց նորից մտածեցի նրա մասին: Եվ ի վերջո կապվեցի՝ գտա նրա հեռախոսահամարը համացանցում, չեզոք հաղորդագրություն ուղարկեցի իմ ու նրա լրիվ անուններով՝ շնորհակալություն հայտնելով հոդվածի համար և նշելով այն, ինչ ինձ դուր էր եկել: Ընդամենը այդքանը՝ ոչ մի առաջարկություն, ոչ մի ակնարկ: Բայց կապ հաստատեցի, ասացի՝ *ես այստեղ եմ, դու այդտեղ ես, քեզ տեսնում եմ*: Հաջորդ օրը նա կարճ պատասխանեց՝ *Շնորհակալ եմ, հաճելի էր*: Ուրիշ ոչինչ: *Լավ, ասացի ինձ, ինչևէ*: Մտածելով, որ արժեր փորձել, և ամեն դեպքում իմաստ ուներ անել:

Իսկ հետո՝ մեկ շաբաթ անց, կիրակի երեկոյան ժամը յոթին մոտ ստացա երկրորդ հաղորդագրությունը: Հենց այն, որը ցանկանում էի: Կարճ, բացահայտ: *Հանդիպե՞նք*:

Պատասխանեցի՝ *Այո*:

Այնուհետև հաղորդագրությունները հորդեցին մեկը մյուսի հետևից, և ես զգացի զարկերակս կոկորդում. նետվեցի ցնցուղի տակ, սափրեցի ոտքերս ու բունոցի շուրջը. հետո հոտազերծիչն էր, շպարը, օծանելիքը և շորը, որը առանց ընտրելու պարզապես քաշեցի վրաս և աստիճաններով ցած վազեցի փողոց. բարձր ծառերի տակ քայլեցի հանրակառքի կանգառ. ծնկներս թուլացել էին, ես շողշողում էի ու փայլում: Դեռ չէի հասել այն փողոց, որով անցնում էր հանրակառքը, երբ պարզ հիշեցի այն, ինչ նա գրել էր իր անդադար շարունակվող հաղորդագրություններում. *Կարող եմ գալ քեզ մոտ: Դյուրաշարժ եմ: Չէ, ես եմ գալիս*, գրել էի ես, *որովհետև դուստրս ինձ հետ է ասարում*: Ուրեմն արի վեստլանդետ, գրել էր նա, և ես պատասխանել էի՝ *լավ*. կարծում էի, թե նա կատակում է, կարծում էի՝ զիտեմ, թե որտեղ է փողոցը,

հասցեն, որ տեսել էի նրա հեռախոսահամարը համացանցում փնտրելիս. կարծում էի՝ ինչ-որ տեղ քաղաքի մյուս կողմում է, գիտեի՝ ո՞ր հանրակառքը նստեն, և որտեղ է իջնելու ամենամոտ կանգառը: Իսկ հետո վերջապես հասկացա, թե նա ինչ էր գրել: Նա իմ քաղաքում չէր: Ապրում էր երկրի մյուս կողմում: Բեռնագետ: Բերգետ: Նա դա տարբեր ձևով նշել էր մի քանի հաղորդագրությունում, բայց ես չէի ընկալել: Ես համոզված էի, որ ճիշտ եմ հասկացել, որ ամեն ինչ իմ նախատեսածի պես է: Բայց իրականությունը միանգամայն այլ էր: Նա այստեղ չէր: Հեռու էր:

Ես շրջվեցի ու վերադարձա տուն:

Իսկ հետո պայմանավորվում եմ մայրիկիս հետ, հարցնում եմ, թե արդյոք նա կարող է մնալ Սոֆիի հետ, որովհետև Սոֆին չի կարող մենակ մնալ, թեև տասնվեց տարեկան է, կամ, ավելի ճիշտ, մինչ այժմ մենք նման բան չենք արել, բայց մայրիկը պատրաստ է, ասում է. «Գնա, անուշա, լավ ժամանակ անցկացրու»:

Կարո՞ղ եմ գալ շաբաթ օրը, գրում եմ երեք օր անց, չորեքշաբթի առավոտյան: Սկզբում նրա պատասխանը վարանող է. *Համարձակվո՞ւմ ես: Պարզապես գա՞լ, առանց այլևայլության*: Ես չեմ պատասխանում, թողնում եմ հաղթահարի իր զգուշավորությունը: Երկու ժամ անց. *Արի: Արի շաբաթ օրն ու մնա, որքան ուզես*:

Շաբաթ առավոտյան օդանավի թռիչքից առաջ ինձ շատ թեթև եմ զգում, վերցնում եմ մի լրագիր ցուցասեղանից, բաց եմ անում, ասես ես մի ուրիշն եմ՝ ինչ-որ մեկը, ով նման բաներ է անում, ով վերցնում է լրագիրն ու բացում. այժմ հենց այդպիսին եմ՝ ուրիշ եմ, և հոգ չէ, որ քառասյին, անկապ ուրախ վիճակում եմ: Աչքի եմ անցկացնում էջերը և համկարծ տեսնում եմ իմ կարծ հարցազրույցը՝ մի քանի հարց էր, շատերն էին դրանց պատասխանել. մոռացել էի, անցյալ օրն էր՝ հեռախոսով, երբ վերադառնում էի տուն: Չէի խնդրել, որ ստուգեն ասածիս ճշտությունը, ընդհակառակը՝ գերադասել էի խուսափել դրանից, պարզապես ուզում էի, որ այդ տեսակի հայտարարությունները վերանան, չէի ուզում, որ ինձ հիշեցնեն դրանք, չէի ուզում մտածել իմ մասին այդ կերպ՝ կողքից: Իսկ այժմ թերթում եմ այս լրագիրը, որը այլապես երբեք չէի ընթերցի. այդտեղ իմ փոքր լուսանկարն է և այն, ինչ ասել էի, ինչը իրականում ահավոր է: Ամեն ինչ այն կերպ է ներկայացված, որ կարելի է կարծել, թե ինձ համեմատում եմ Լուիզ Բուրժուային: Նրան և ինձ: Մեզ: Հենց դա կարելի է կարծել: Լրագրում հենց դա է գրված: Ո՞ւմ տեղ էի ինձ դրել: Իսկ ես պատրաստվում եմ մեկնել այդ տղամարդու մոտ, ուղղակի փաթաթվել վզին, համարում եմ, որ նա պատրաստ է ինձ վերցնել: Գալ և ստանալ: Ասես ընդամենը պետք է գալ:

Ինձ կարծես ապտակեցին: Քրտնեցի, ուզում էի թաքնվել, դառնալ անտեսանելի, ոչ մի տեղ չգնալ: Իսկ ես այնքա՛ն ինքնագոհ էի: Այնքան երջանիկ:

Թռի՞չքը: Ոչինչ չեմ հիշում: Նախքան տեղ հասնելը ամբողջ հիսուն րոպե՛ն լոկ ուզում էի քողարկել դեմքս, ազատվել դրանից: Այժմ ես հանդիպելու էի նրան, ուզում էի լինել գեղեցիկ, լուսաշող, ուրախություն ճառագել: Այդ մասին էի երագում, դա էի պատկերացնում: Շարժանկարի հերոսուհու պես մոտենալ նրան և շլացնել: Բայց կերպարս վարկաբեկված է: Այդ զգացողությունն ունեմ: Վեր կենալով և ուղղվելով օդանավի ելքի կողմը՝ ես ասես քայլում եմ երկու հոգու միջև. երկուսն էլ ես եմ՝ մեկը ամբողջ գիշեր գրեթե ցնծացել է երագում՝ խանգարելով իր քունը, իսկ մյուսը վարկաբեկված է ու տգեղ: Անտեսանելի մնալով՝ քայլում եմ նրանց միջև, առաջ եմ գնում միջանցքներով մյուս ուղևորների հետ և ի վերջո հասնում եմ ուղեբեռի սրահ. օդակայանը փոքր է, դահլիճի մյուս ծայրում տեսնում եմ նրան՝ նրա փարթած մազերը, սև գործված վերնազգեստն ու կանաչ փետրաբաճկոնը, ձեռքին լրագրերի մի տրցակ կա. նա ինձ է նայում. ուղեպայուսակը ձեռքիս մոտենում եմ և կանգնում նրա առաջ. նա գրկում է ինձ ու երկար բաց չի թողնում: Մենք ոչինչ չենք ասում: Գցում եմ ուղեպայուսակը գետնին, որպեսզի ես էլ երկու ձեռքով գրկեմ նրան, հպվեմ սևությանը. լսում եմ նրա սրտի բաբախյունը, վերնազգեստի միջով զգում եմ սիրտը, որ զարկում է ու զարկում:

Ինքնաշարժով գնում ենք նրա տուն. երկինքն ամպամած է, մի քիչ անծրևում է. նա չի գտնում ճանապարհը, մոլորվում է: Ես ծիծաղում եմ: «Որքա՞ն ժամանակ ես ապրում այստեղ»: «Երեք տարի», - ասում է ու նույնպես ծիծաղում է:

Երբ մենք նրա փոքր-ինչ դատարկ ընդարձակ հյուրասենյակում ենք, ես մոտենում եմ ու հպվում նրան, և նա թույլ է տալիս, որ մոտենամ: Մենք պարզապես նայում ենք միմյանց: Ավելի ուշ, երբ նա գնում է խանութ՝ մի բան գնելու, ինչը մոռացել էինք անել, բնակարանում նրան սպասելիս ես լաց եմ լինում: Չգիտեմ ինչու: Կտրել էի այս երկար ճամփան, եկել նրա մոտ, կարողացել էի հպվել նրան, և դա այնուամենայնիվ թվում է անիմաստ:

Ամբողջ օրը մնում ենք բնակարանում: Մտադիր էինք մի քանի ցուցահանդես այցելել, *Վերջտեսում* կար մեկը, որը կարծես լավն էր, մեկն էլ Գեղարվեստի թանգարանում էր, որտեղ Յոհանեսը աշխատում էր, կամ պարզապես ինչ-որ տեղ գնալ ինքնաշարժով, շրջել ոտքով: *Կարող ենք զբոսնել*, գրել էի նրան մի հաղորդագրությունում, *Այո*, առանց հապաղելու պատասխանել էր նա՝ նշելով վայրերի, տեղերի, բլուրների մի քանի անվանում, ինչ-որ բան, որը հնչում էր թռչնալեզվի պես: Խնում ենք նրա գնած զինին. պայուսակում էր հետևի նստատեղին, երբ եկել էր օդակայան՝ ինձ դիմավորելու: Խոսում ենք:

Նախկինում երբեք չէինք հանդիպել, երբեք չէինք խոսել: Մթնշաղին քայլում ենք մինչև լիճը, մինչև ավազոտ ափը, որ երևում է պատուհանից: Ափի երկայնքով քարերի և եղեգների միջև ձգվում է մի արահետ: Յետևում ենք դրան: Ձեռքս անընդհատ նրա ձեռքում է:

Ջրոսանքի ընթացքում նա ինձ մի քանի անգամ լուսանկարում է փոքր առվակի մոտ, որը պետք է հատենք: Թվում է, թե լուսանկարները ամեն ինչ իրական են դարձնում՝ ինձ, այն փաստը, որ ես եկել եմ, որ մենք միասին ենք այստեղ:

Հաջորդ առավոտ նա ինձ տանում է օդակայան: Ամբողջ ժամանակ մենք խոսում էինք, սեր չարեցիք, ընդամենը համբուրվեցինք, թեև քնեցինք նույն անկողնում: Նա ուզում է, որ մենք սիրահարներ լինենք: Ասաց գնալուս պահին օդակայանի անցակետի մոտ: Մենք չէինք կարող սիրահարներ լինել: Նա ինձ ամուր սեղմում է գրկում, ջերմ է, գրեթե հուսալքված: Կարծես դա մի բան էր, որը հնարավոր է անխտի վճռել, որոշել: Ընկերակցության անդամ գրանցվելու պես: «Ոչ, - ասում եմ: - Ոչ»:

Հետագայում կհասկանամ, որ ես չեմ ընկալել այն ամենը, ինչ նրան բնորոշ է: Թվում էր, թե ամեն ինչ հասկացել եմ այս առաջին հանդիպման ժամանակ: Բայց ի վերջո ճշմարտությունն այլ է, տարբեր:

Ի՞նչ տեսա: Անճարակ մի մարդու: Նրա ակնոցը մաքուր չէ՝ ապակիները փոշոտ են ու բծոտ, վերնազգեստին բծեր կան, նա ածիլված չէ, ասես մի քանի օր անցկացրել էր լեռներում և այնտեղից ուղիղ եկել էր ինձ դիմավորելու:

Նրա բնակարանը անկարգ վիճակում չէր. *անորոշ տեսք ունի*, մտածեցի հյուրասենյակի շեմքին՝ պայուսակս թողնելով նախասենյակում: Գույների, կահույքի, առարկաների առումով՝ նա կարծես հատուկ ընտրություն չէր կատարել. պարզապես գործնական ոճի հարդարանք էր. ութսունականների հյուրասենյակի կահույք՝ սոճու փայտից և դեղին բարձերով, տափակ լուսապաստառով հեռուստացույց, երկու թեքվող բազկաթոռ՝ շագանակագույն ու սև: Ընդսմին այն, ինչ կարևոր էր, ընտրված էր մեծ խնամքով: Բնակարանը նույնպես, որը շենքի վերջին հարկում էր, որտեղից երևում էր ծովախորշի, կղզիների, զառիկող կանաչ բլուրների լայնատարած տեսարանը: Նա էր դա ընտրել, ինքն էր ցանկացել: Ցանկացել էր ունենալ այդ տեսարանը, լինել այդ պատկերում, դառնալ փոփոխվող լայնարձակ համրության զրուցակիցը:

Եվ գինին, որ նա գնել էր իմ գալու կապակցությամբ, բայց ոչ մնացածը՝ սուրճին ավելացնելու յուղազերծ կաթը կամ շագանակագույն պանիրը, որոնց մասին ասացի, որ դրանք հաճելի կլինեն, երբ նա ինձ հարցրեց նախորդ օրվա հաղորդագրությունում: Բնակարանում հյուրի սենյակ կա՝ երկու մահճակալով, անկողինները զգված են: Փաստ է, որ նա շատ բան գիտի,

շատ խորհել է, կարդացել: Տեսնում է արվեստի գործերի, հասարակության և պատմության զարգացման ուղիները այն կերպ, որը ինձ անհասանելի է: Եվ ընդամին ձեռքերն անճարակ են: Երբ միասին ուտելիք ենք պատրաստում՝ սառեցված, թացանված սաղմոն, որը խորովում ենք այլումինե թիթեղին ջեռոցում, և բրոկոլի, որը նա ամբողջովին սուզում է ջրով կաթսան: Փաստ է, որ կտրելիս, բանելիս ձեռքերը նրան լրիվ չեն ենթարկվում: Ասես ամեն ինչ ուր որ է ձեռքից դուրս կսահի, կընկնի:

- ՉԳԻՏԵՄ՝ ԵՄ ՈՎ ԵՄ: ԻՆՔՍ ԻՆՉ ՉԵՄ ՃԱՆԱՉՈՒՄ, - ասում է Յոհանեսը, երբ մենք նստած ենք հնդկական սեղանի մոտ ճաշասենյակում՝ հյուրասենյակի մյուս ծայրում:

Մեր միջև, ափսեին չորս փոքր մոմեր էին վառվում. նա գնացել էր մոտակա խանութ դրանք գնելու, երբ ես մե՛նակ սպասում էի նրան ու լաց էի լինում:

Անկարությունը՝ որպես ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ: Ոչ ոք սպասելիք չունի շնորհագուրկից, ոչ ոք որևէ բան չի պահանջում: Դա նշանակում է՝ դուրս գալ խաղից: Խուսափել մասնակցությունից, խուսափել պատասխանատվությունից ու մեղքի զգացումից: Քանի որ շնորհագուրկը չգիտի, չի արել, չի կարող: Եվ ընդամին կարող է իմանալ բազում բաներ, լինել բացառապես օժտված՝ այնտեղ դրսում, արտաքին աշխարհում, որտեղ նրան հավասարը չկա: Որտեղ նա ոչ ոքի պարտք չէ, որտեղ նա կարող է վճարել ու հեռանալ: Անկարությունը նաև շրջան է, որը սահմանի պես հիմնովին սահմանագծում է մարմինը: Այդ սահմանը հատելն է անվանվում հպանք՝ անկախ այն բանից, թե դա դրսից ինչ-որ մեկն է անում, թե հենց ինքը՝ ներսից: Թափանցել մեկի սահմանից ներս կամ, եթե հենց ինքը պետք է հատի իր սահմանը, հասնել սեփական սահմանին ու դուրս գալ:

Շնորհագուրկը անխոցելի է: Անկարությունը զրահ է, անխոցելի զրահ: Ի՞նչ է պաշտպանում: Հիմնականում լոկ քնքշությունը, այլ բան չկա: Այլ բան չեն կարող կարծել: Պինդ բանը ամուր զրահի կարիք չունի: Միայն փափուկ բանը պետք է այդքան ուժգին պաշտպանված լինի: Ճիշտ է, չէ՞: